

8712



ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ՝
Շրջակա միջավայրի նախարար
Հակոբ Սիմիդյան
«06» 08 2024թ.

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

ԲՓ № 153 - 24

Նախաձեռնող՝

«Քինգ» ՍՊԸ
Երևան, Արաբկիր, Նաիրի Ջարյան, տ 42

Գործունեությունը՝

Մարգարա բնակավայրի «ՔԻՆԳ» տեղամասում
երկրաբանական ուսումնասիրություն
Արմավիրի մարզ, Մարգարա բնակավայր

Առդիր՝ 6 թերթ

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵՐՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ
ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱՋԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

ԲՓ № 153 - 24

«06» օգոստոսի 2024 թ.

Արմավիրի մարզի Մարգարայի ԱԿԽ-ի հանքավայրի «ՔԻՆԳ» տեղամասում երկրաբանական ուսումնասիրության աշխատանքների շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտ

Նախաձեռնող՝

«Քինգ» ՍՊԸ

Փաստաթղթի տեսակը՝

Շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտ

Գտնվելու վայրը՝

Արմավիրի մարզ, Մեծամոր համայնք, Մարգարա բնակավայր

Ներածական մաս. «Քինգ» ՍՊԸ-ի կողմից փորձաքննության ներկայացված Արմավիրի մարզի Մարգարայի ԱԿԽ-ի հանքավայրի «ՔԻՆԳ» տեղամասում (այսուհետ՝ Տեղամաս) երկրաբանական ուսումնասիրության իրականացման աշխատանքների փորձաքննությունն իրականացվել է «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» (ՀՕ-110-Ն) օրենքի (այսուհետ՝ Օրենք) պահանջներով: Նախատեսվող գործունեությունը, համաձայն Օրենքի 14-րդ հոդվածի 6-րդ մասի 2-րդ կետի «ա» ենթակետի՝ «Գ» կատեգորիայի գործունեության տեսակ է:

Ուսումնասիրվող տեղամասը գտնվում է Արմավիրի մարզի Մեծամոր համայնքի Մարգարա բնակավայրի վարչական տարածքում և տեղակայված է Մարգարա գյուղի ամենամոտ բնակելի տարածքից 60 մ հեռավորության վրա: Ըստ հայտում ներկայացված տեղեկատվության՝ այն գտնվում է Արաքս գետից 59-60 մ հեռավորության վրա:

Նկարագրական մաս. Նախատեսվող երկրաբանահետախուզական աշխատանքները կատարվելու են 3,17 հա տարածքում: Հողի նպատակային նշանակությունը՝ գյուղատնտեսական, գործառնական նշանակությունը՝ այլ հողատեսքեր, սեփականության ձևը՝ ենթավարձակալություն: Տեղամասում նախկինում խախտված, վերականգնված հողեր, հանված, պահեստավորված, պահպանված հողաբուսական շերտ չկա:

Տեղամասի ծայրակետային կոորդինատներն ըստ ARM WGS-84 կոորդինատային համակարգի բերված են ստորև.



Տեղամասում երկրաբանահետախուզական աշխատանքների ընթացքում հորատումն իրականացվելու է «ЗИЛ 131» մակնիշի հորատող սարքի միջոցով, իսկ հետախուզահորերն անցկացվելու են «New Holland B80C» մակնիշի էքսկավատորով: Շահագործվելու է նաև «КамАЗ 511» մակնիշի ինքնաթափ: Բոլոր սարքավորումները օգտագործվելու են պայմանագրային-վարձակալական հիմունքներով:

Երկրաբանահետախուզական աշխատանքների իրականացման համար անհրաժեշտ բեռների և ուղևորների փոխադրումը կկատարվի հիմնականում ասֆալտապատ և մոտ 1,0 կմ երկարությամբ գրունտային ճանապարհներով:

Ըստ հայտում ներկայացված տեղեկատվության՝ Տեղամասի և նրան հարակից տարածքներում սողանքներ, կարստեր և փլուզումներ առկա չեն: Գրունտային ջրերի քանակի և որակի մասին տեղեկություն կստացվի երկրաբանահետախուզական աշխատանքների ավարտին: Տեղամասի տարածքում դաշտային դիտարկումների արդյունքում կարմիրգրքյան տեսակներ չեն հայտնաբերվել: Տեղամասն, ինչպես նաև հարակից շրջանները ներառված չեն բնության հատուկ պահպանվող տարածքում:

Երկրաբանահետախուզական աշխատանքների իրականացման ընթացքում բնապահպանական ազդեցությունները շրջակա միջավայրի վրա կլինեն ոչ զգալի:

Երկրաբանական ուսումնասիրության աշխատանքների ընթացքում օդային ավազանի վրա ազդեցությունը կլինի շահագործվող տեխնիկայից առաջացող գազերի և փոշու արտանետումների ձևով: Կապիլյար ներծծման հաշվին ավազակոպճային կուտակը գտնվում է խոնավ վիճակում, ինչի հետևանքով տեղամասի տարածքում հետախուզական փորվածքների անցման, նմուշառման և փորձնական հանույթի ժամանակ փոշի չի առաջանա: Փոշեգոյացում կլինի միայն տեղամասի տարածքին մոտեցնող ճանապարհների վրա՝ տրանսպորտային միջոցների շարժի արդյունքում, որի հետևանքով գոյացող արտանետումները չեն գերազանցելու սահմանային թույլատրելի խտությունները (ՍԹԿ):

Նախնական գնահատմամբ ջրային ռեսուրսների աղտոտում տեղի չի ունենա, քանի որ աշխատանքների իրականացման տեխնոլոգիայով արտահոսքեր չեն նախատեսվում: Տեղամասի եզրագիծը գտնվում է Արաքս գետի ափից 60 մ հեռավորության վրա:

Ռեկուլտիվացիոն աշխատանքների իրականացում ընկերության կողմից կատարվելու է միայն 2 հետախուզահորից հանված ծավալների հետլցման ժամանակ, որը կկատարվի մեխանիկական եղանակով: Հանույթի ընդհանուր ծավալը կկազմի 21 մ³ (7,0 մ x 2,0 մ x 1,5 մ), իսկ շրջակա միջավայրի պահպանության դրամագլխին ընկերության կողմից նախատեսվում է հատկացնել 84000 ՀՀ դրամ:

Այս ծրագրով մոտեցող ճանապարհների և հորատահարթակների շինարարական աշխատանքներ չեն նախատեսվում, քանի որ Տեղամասի տարածքի հարթ ռելիեֆը և դաշտամիջյան ճանապարհները բարվոք վիճակում են և նպաստավոր՝ դաշտային աշխատանքները կազմակերպելու համար:

Նախատեսվող գործունեության անբարենպաստ ներգործություն ունեցող գործոններից է նաև մեքենաների շարժի, տեխնիկայի աշխատանքի հետևանքով առաջացող աղմուկը: Նախնական հաշվարկներով աշխատանքների ժամանակ առաջանալու է 40 դԲԱ աղմուկ, ինչը ցածր է բնակելի գոտում աղմուկի թույլատրելի մակարդակի ցուցանիշից (45 դԲԱ):

Տեղամասի տարածքում արտակարգ իրավիճակները կարող են կապված լինել Արաքս գետի վարարման հետ: Համաձայն գետի բազմամյա դիտարկման տվյալների վերաբերյալ



շրջանը տևում է մոտ 2,5 ամիս՝ ապրիլից հունիս, և գետի վարարման շրջանում, ըստ անհրաժեշտության, երկրաբանական ուսումնասիրության աշխատանքներ չեն կատարվելու, տեխնիկական միջոցները հեռացվելու են տեղամասից:

Անբարենպաստ օդերևութաբանական պայմաններ (քամու արագացում, անհողմություն, անոմալ բարձր շոգ կամ ցուրտ, թանձր մառախուղ, ամպրոպ) առաջանալու դեպքում հայտում նախատեսված են համապատասխան կանխարգելիչ միջոցառումների (ըստ իրավիճակի) իրականացում:

Պատճառաբանական մաս. Փորձաքննության գործընթացում «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» օրենքով սահմանված կարգով իրականացվել են հանրային քննարկումներ, որոնց ընթացքում Մարգարա բնակավայրի բնակչությունը համաձայնություն է տվել երկրաբանական ուսումնասիրությունների իրականացմանը՝ պայմանով, որ աշխատանքներում կներգրավվեն համայնքի բնակիչները և Մարգարա բնակավայրում կիրականացվեն ճանապարհի բարեկարգման և մշակույթի տան վերանորոգման աշխատանքներ: Հանրային քննարկման ընթացքում նախաձեռնողի ներկայացուցիչը պարտավորվել է ինչպես երկրաբանահետախուզական աշխատանքների, այնպես էլ հետագա շահագործման ընթացքում աշխատակիցներ ներգրավել համայնքից, ինչպես նաև աջակցել ազդակիր համայնքին և հատկացնել նախատեսված սոցիալական վճարները:

Շրջակա միջավայրի բաղադրիչների վրա վնասակար ազդեցության մեղմացման/բացառման նպատակով նախատեսվել են մի շարք բնապահպանական միջոցառումներ.

➤ նավթամթերքների պահեստավորում և պահում համապատասխան թեքություն ունեցող հատուկ հատկացված տեղում, որը կապահովի թափված նավթամթերքների հոսքը դեպի այն հավաքող բետոնապատ փոս,

➤ մեքենաների տեխնիկական սպասարկման իրականացում (յուղերի, քսայուղերի փոխարինում, պահպանում և պահեստավորում) Տեղամասից դուրս՝ մասնագիտացված ընկերությունների կողմից,

➤ կենցաղային աղբի հավաքում հատուկ անթափանց տարաների մեջ, տեղափոխում մոտակա կազմակերպված աղբավայր՝ համապատասխան ծառայությունների հետ կնքված պայմանագրի համաձայն,

➤ շահագործվող տեխնիկայից թունավոր նյութերի արտանետումները նվազեցնելու նպատակով չեզոքացուցիչ սարքերի տեղադրում,

➤ շահագործվող տեխնիկայի շարժիչների կարգավորում և ձայնախլացուցիչների տեղադրում՝ աղմուկի մակարդակը և կենդանական աշխարհի վրա բացասական ազդեցությունը նվազեցնելու նպատակով,

➤ տեղամասին մոտեցնող ճանապարհների ինտենսիվ ջրում տարվա չոր և շոգ եղանակին, տարածքի խոնավացում՝ փոշեգոյացումը բացառելու նպատակով,

➤ խախտված տարածքների ռեկուլտիվացիա՝ երկրաբանահետախուզական աշխատանքների ավարտից հետո,

➤ աշխատանքների իրականացման ընթացքում ապահովվելու է բուսական աշխարհի օբյեկտների, դրանց աճելավայրերի պահպանությունը, վայրի բուսատեսակների բազմազանության և բուսական ծածկույթի ամբողջականությունը,

➤ կենդանական աշխարհի պահպանության նպատակով ապահովվելու է կենդանիների տեսակային բազմազանության, դրանց պոպուլյացիաների ու



համակեցությունների ամբողջականության, միգրացիոն ուղիների պահպանությունը, պաշտպանությունը, բնականոն վերարտադրությունը, կենսամիջավայրի ամբողջականության պահպանումը:

Եզրակացությունը կազմելիս հաշվի են առնվել պետական կառավարման մարմիններից՝ առողջապահության, ներքին գործերի, կրթության, գիտության, մշակույթի և սպորտի, պաշտպանության նախարարություններից, ինչպես նաև ազգային անվտանգության ծառայությունից, կադաստրի կոմիտեից և շրջակա միջավայրի նախարարության ստորաբաժանումներից ստացված կարծիքները:

Նախատեսվող գործունեության ընթացքում բոլոր աշխատանքները նախատեսված են ՀՀ օրենսդրության պահանջներին համապատասխան:

Բնապահպանական ազդեցությունները կրելու են ժամանակավոր և լոկալ բնույթ: Բնապահպանական բոլոր միջոցառումներն արտացոլված են բնապահպանական կառավարման և մշտադիտարկումների իրականացման պլաններում:

Անհրաժեշտ է հաշվի առնել այն հանգամանքը, որ երկրաբանական ուսումնասիրության համար տրված դրական փորձաքննական եզրակացությունը չի երաշխավորում հետագայում արդյունահանման աշխատանքների իրականացման համար շրջակա միջավայրի նախարարության կողմից փորձաքննական դրական եզրակացության տրամադրում:

Փորձաքննական պահանջներ

Նախատեսվող գործունեության ընթացքում անհրաժեշտ է առաջնորդվել՝

1. «Մթնոլորտային օդի պահպանության մասին» օրենքի պահանջներով՝ փոշու և վնասակար արտանետումների տարածումը կանխարգելելու նպատակով,
2. Ջրային օրենսգրքի պահանջներով՝ ջրային ռեսուրսների (այդ թվում՝ ստորերկրյա) պահպանության նպատակով,
3. ՀՀ կառավարության 2005 թվականի հունվարի 20-ի N 64-Ն որոշմամբ հաստատված հավելվածի պահանջներով՝ ջրակոհամակարգերի սանիտարական պահպանման տարածքների պահպանության նպատակով,
4. ՀՀ կառավարության 2010 թվականի հունվարի 29-ի N 71-Ն և 72-Ն որոշումների պահանջներով՝ Կարմիր գրքում գրանցված բույսերի և կենդանիների պահպանության նպատակով, հաշվի առնելով նաև այն հանգամանքը, որ տարածքում հանդիպում է բույսերի Կարմիր գրքում գրանցված բորակաթուփ Շոբելի տեսակը– *Nitraria schoberi* L,
5. ՀՀ կառավարության 2014 թվականի հուլիսի 31-ի N 781-Ն որոշմամբ հաստատված կարգի պահանջներով՝ բուսական աշխարհի օբյեկտների պահպանության նպատակով,
6. Կառավարության 2017 թվականի դեկտեմբերի 14-ի N 1643-Ն որոշման պահանջներով՝ խախտված տարածքների վերականգնման նպատակով,
7. Կառավարության 2018 թվականի փետրվարի 22-ի N 191-Ն որոշմամբ սահմանված պահանջներով՝ իրականացնելով շրջակա միջավայրի քաղաքների



(հողային ծածկույթ, օդի որակ, աղմուկ, ջրային ռեսուրսներ, կենսաբազմազանություն) մշտադիտարկումներ,

8. Արաքս գետի վարարումների շրջանում անհրաժեշտ է ապահովել հայտում ամրագրված միջոցառումները՝ դադարեցնելով աշխատանքները,

9. ապահովել հայտում ներկայացված բնապահպանական կառավարման և մշտադիտարկումների պլաններում ամրագրված բոլոր միջոցառումների իրականացումը:

ԵԶՐԱՓՈՒԿ ԿԻՉ ՄԱՍ

«Քինգ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված Արմավիրի մարզի Մարգարայի ԱԿԽ-ի հանքավայրի «ՔԻՆԳ» տեղամասում երկրաբանական ուսումնասիրության իրականացման շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտին տրվում է դրական եզրակացություն՝ վերը նշված փորձաքննական պահանջների պարտադիր կատարման պայմանով:

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի տնօրեն՝



Խաչիկ Մարտիրոսյան

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի տնօրենի տեղակալ՝

Հերիքնազ Մկրտչյան

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի գլխավոր մասնագետ՝

Քրիստինե Հարությունյան